ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

Հաստատում եմ՝ _____ Ռ. Մարտիրոսյան

Կոտայքի տարածաշրջանային

պետական քոլեջի կառավարման

խորհրդի նախագահ

16 դեկտեմբերի 2018 թվական

# ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

## ՆԵՐՔՈԼԵՋԱՅԻՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

ՀՐԱԶԴԱՆ 2018

## 1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

*1.1. Սույն կանոնակարգը սահմանում է ԿՏՊՔ-ի ներքոլեջային կրթաթոշակների սահմանման և դրանց տրամադրման կարգը:*

*1.2. Ներքոլեջային կրթաթոշակի տրամադրումը և դրա տրամադրման կարգը քննարկվում է քոլեջի տնօրենի առաջարկությամբ և հաստատվում է քոլեջի կառավարման խորհրդի կողմից :*

*1.3. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են տարածաշրջանային պետական քոլեջի օրինակելի կանոնադրությունը և կառավարման խորհրդի կանոնակարգը:*

## 2.ՆԵՐՔՈԼԵՋԱՅԻՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

*2.1.Ներքոլեջային կրթաթոշակը ֆինանսական օժանդակություն է գերազանց և լավ առաջադրմություն ցուցաբերած, հասարակական ակտիվ դիրքորոշում ու պատշաճ վարքագիծ դրսևորած ուսանողներին:*

*2.2.Ներքոլեջային կրթաթոշակ կարող են ստանալ ինչպես անվճար, այնպես էլ վճարովի ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողները, սույն կանոնակարգի 2.1 կետում նշված պայմանների ապահովման դեպքում:*

*2.3.Ուսանողների լավ և գերազանց առաջադիմությունը քննարկվում է մանկավարժական խորհրդի կողմից և ներկայացվում է կառավարման խորհրդի հաստատմանը:*

*2.5.Ուսանողների հասարակական ակտիվ դիրքորոշումը բնութագրվում է ստորև նշված ցուցանիշներով.*

- *Մասնակցություն քոլեջի ուսանողական հասարակական կյանքին*
- *Զեկուցումներ, ռեֆերատներ, հրատարակված աշխատանքներ զանգվածային լրատվության միջոցներում, հետազոտական աշխատանքներ*
- *Մասնակցությունը ներքոլեջային , քաղաքային, հանրապետական և միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին*
- *Քոլեջի ղեկավարության մեկանգամյա կամ բազմակի հանձնարարականների բարեխղճորեն և ժամանակին կատարում*

2.7. Ուսանողների պատշաճ վարքագիծը դրսևորվում է նրանց կողմից քոլեջի ներքին կարգապահական կանոնների խստիվ պահպանմամբ (ուսանողի հետ կնքված պայմանագիր և ներքին կարգապահական կանոններ), և նշված կանոնների խախտման առիթով տնօրենի կողմից տրված նկատողության հրամանները հիմք են հանդիսանում ներքոլեջային կրթաթոշակ չհատկացնելու համար:

2.8. Ներքոլեջային կրթաթոշակ քոլեջը տրամադրում է սեփական և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

2.9.Ներքոլեջային կրթաթոշակի չափը սահմանվում է յուրաքանչյուր ուսանողի համար առանձին:

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրեն Գ. Գևորգյան